# ԳԼԵՆԴԵԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՐԹԱՇՐՋԱՆ

## ՔԼԱՐՔ ՄԱԳՆԵՏ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

## 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

**ԴԻՄՈՂՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԲԱՎԱՐԱՐԵՆ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ: 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ (1 ԵՎ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐ) ԵՎ 8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ (1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ) ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ ԿՎԵՐԱՆԱՅՎԵՆ: ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԽՎԱԾ Է ԴԻՄՈՂՆԵՐԻ 8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆԵՐԻՑ:**

### ԸՆԴՈՒԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. **Ուսումնական** – Աշակերտ պետք է 2.0 ("C") կամ ավելի բարձր միջին ունենա հիմնական առարկաներից (անգլերեն, մաթեմատիկա, գիտություն և հասարակագիտություն):
2. **Մաթեմատիկա** - Դիմողները **ՊԵՏՔ Է** կարողանան հանրահաշիվ I կամ ավելի բարձր մաթեմատիկա վերցնելու պատրաստ լինեն 8-րդ դասարանը ավարտելուց:
3. **Վարք** - Դիմողները պետք է բավարար վարք ունենան, ոչ ավելի քան 5 դպրոցական կանոնների խախտում կամ ոչ ավելին քան 2 "U" անբավարար վարքի թվանշան վարքի համար:
4. **Հաճախումներ**- Դիմողները պետք է կանոնավոր դպրոցական հաճախումներ ունեն, ոչ ավելի քան 14 լիօրյա բացակայություն:
5. **Բնակություն** - Դիմողները պետք է Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի սահմաններում բնակվեն, որպեսզի Քլարք մագնետ ավագ դպրոցի ընդունելության դիմում ներկայացնելու իրավունք ունենան: Այն աշակերտները, որոնք **GUSD են հաճախում Միջկրթաշրջանային թույտվությամբ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՆ դիմում ներկայացնելու:**
6. Եթե ներկայում բնակվում են Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի տարածքում, բայց չեք հաճախում կրթաշրջանի դպրոցներից մեկը, խնդրվում է 2 բնօրինակ կենցաղային սպասարկման փաստաթուղթ ներկայացնել ծնողի/խնամակալի անունով: Պաշտոնական գնահատականների ցանկը՝ (ներկայացնել 7-րդ և 8-րդ դասարանների գնահատականները՝ 9-րդ դասարանում տեղավորվելու համար) **ամենավերջին ստանդարտ քնությունների արդյունքը*** հաճախած ներկա դպրոցից և կարգապահության ու հաճախումների տվյալները ներկայացնել Աշակերտների աջակցման գրասենյակ, հետևյալ հասցեով՝ 223 N. Jackson Street, Room 203, Glendale:

   ****Մասնավոր դպրոցի դիմողներ միայն**- Քանի որ պահանջվում են նահանգային ստանդարտները, մասնավոր դպրոցների (ներգրավված Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի տարածքում) աշակերտները պետք է ստանդարտ քննության միավորները ներկայացնեն, որպեսզի Քլարք մագնետ դպրոց ընդունվելու վերանայման ենթակա լինելու համար:*

### ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

1. Դիմումները մատչելի են **ՄԻԱՅՆ** համացանցով՝ www.gusdmagnetandflag.com հասցեով: Եթե տանից համացանցի հնարավորություն չունեք, ապա կարող եք դիմումնագիր լրացնել անձնապես այցելելով՝ 223 N. Jackson Street, Room 203, Glendale և մինչև **2019թ.հունվարի 31-ը**, երեկոյան ժամը **4:30 -ը** դիմումնագիր լրացնելու: Փոստով կամ FAX-ով դիումներ չեն ընդունվի:
2. Բոլոր դիմումները կվերանայվեն: Միայն իրավասու դիմողների դիմումնագրերը կդվեն 2019թ. մարտի 8-ի վիճակահանության ընտրության: Եթե ավելի շատ դիմողներ լինեն, քան ընտրման քանակը, ապա սպասողների ցանկ կկազմվի էլեկտրոնային վիճակահանության համակարգով: Ուշացրած դիմումները կդրվեն սպասողների ցանկի վրա:

### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ CMHS-Ի ՄԱՍԻՆ

1. **Քլարք մագնետ ավագ դպրոցը Մասնագիտացված ուսուցման դասավանդումներ չի առաջարկում բացառիկ կարիքներ ունեցող աշակերտների համար:**
2. Իսպաներենը միակ օտար լեզուն է, որն առաջարկվում է Քլարքում:
3. **9-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԽՈՍՏԱՆԱՆ, ՈՐ ՄՆԱԼՈՒ ԵՆ ՔԼԱՐՔ ՄԱԳՆԵՏ ԴՊՐՈՑՈՒՄ ՄԻՆՉԵՎ ԴՊՐՈՑՆ ԱՎԱՐՏԵԼԸ:**
4. Եթե ընդունելության որևէ պահանջ մեր ստանդարտներից ցածր լինի, ապա աշակերտը կվերադառնա իր բնակավայրի դպրոցը:
5. Աշակերտները պետք է հետևի Քլարք մագնետ ավագ դպրոցի հագուստի ստանդարտներին:
6. Աշակերտները և ծնողները պետք է Համացանցի օգտագործման համաձայնագիր ստորագրեն համակարգչից օգտվելու համար:
7. Ընդունելության համար քույր/եղբորը առավելություն չի տրվի: Բացառություն կտրվի երկվորյակներին:
8. Գլենդել և Հուվեր ավագ դպրոցի աշակերտները կապահովվեն երթևեկությամբ: Երթևեկության արժեքը $ 100 է կիսամյակի (տարեկան $200) և յուրաքանչյուր 9-12-րդ դասարանների աշակերտի համար (Ուսումնական կոդ 39807.5): Գինը կարող է բարձրանալ բյուժեի համապատասխան:
9. Արտադասարանային պարապմունքներ, ինչպիսին խմբակները և սպորտային պարապմունքները, Քլարք մագնետում մատչելի են ըստ հետաքրքրության և տեղանքի հարմարության: California Interscholastic Federation (CIF) սպորտային դասերը շարունակաբար մատչելի են աշակերտի բնակավայրի դպրոցում, եթե նրա համար տեղ կամ և 7-րդ դասաժամին չի խանգարում:
10. Ծնողներին խրախուսում ենք մասնակցել Քլարք մագնետ ավագ դպրոցի կազմակերպած ծրագրերին և միջոցառումներին:
11. Այս կամ որևէ այլ տեղեկությունների կեղծարարությունը արդյունք կդառնա ԶՐԿՎԵԼՈՒ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ: